

Յ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Նոր Տարիի եւ Ս. Ծնունդի առիթով, Պատրիարքարանքն յղուած են հետեւեալ հեռագրերը.

Արարական Ռամստանի տոնի առիթով, փոստակուած են հետեւեալ հեռագրերը.

4 Յունուար 1966, Երուսաղէմ

22 Յունուար 1966, Երուսաղէմ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Առաջին, Կաթողիկոս Ամենայն Հայոց, Էջմիածնի.

Ն. Վ. Հիւսէյն Թագաւոր, Ամման.

Նոր Տարուան եւ Սուրբ Ծնունդի առիթով Մեր, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ Յորդանանի Հայ համայնքին անուով Ձերդ Սուրբ Օծուածեան կը ներկայացնենք մեր ամենէն անկեղծ շնորհաւորութիւնները, եւ կ'աղօթեմք առ Ամենակարգն Աստուած որ Ձերդ Սուրբ Օծուածեան շնորհէ շարունակական քաջառողջութիւն, յառողութիւններով առիթ բազմաթիւ տարիներ եւ ա՛նասանութիւն՝ մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

4 Յունուար 1966, Երուսաղէմ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Խորէն Առաջին, Կաթողիկոս Տանն Կիլիկիայ, Անթիպիս.

Սուրբ Ծնունդի եւ Նոր Տարուան երջանիկ առիթով, Ձերդ Սրբութեան կը ներկայացնենք Մեր լաւագոյն բարեմաղթութիւններն ու զգացումները՝ Ձեր քաջառողջութեան, Կիլիկիայ Սուրբ Աթոռին եւ Ձեր բարձր հովանաւորութեան տակ գտնուող հաւատացեալ ժողովուրդին համար:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

23 Դեկտ. 1965, Երուսաղէմ

Ն. Ս. Պողոս Զ. Պապ, Վատիկան.

Եւրոպայի Սուրբ Ծնունդի եւ Նոր Տարուան բարբառասէկ առիթով, Ձերդ Սրբութեան կը ներկայացնենք Մեր ամենէն անկեղծ շնորհաւորութիւնները, Ձեզի մաղթելով շարունակ լիանալ քաջառողջութիւն եւ յաջողութիւն Ձեր մեծ եկեղեցիին: Թող Ամենակարգն Աստուած յաջողութեամբ պսակէ Պեր բոլոր գործերը:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Ռամստանի տոններուն առթիւ, Ձերդ վեհափառութեան կը ներկայացնենք իմ, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան, Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան եւ Յորդանանի Հայ համայնքին բարեմաղթութիւններն ու աղօթները: Կ'աղօթեմ Աստուծոյ որ Ձերդ վեհափառութեան շնորհէ երկար կեանք եւ յաջողութիւն, Յորդանանի տայ բարգաւաճում եւ բարօրութիւն՝ Ձերդ վեհափառութեան հովանաւորութեամբ եւ իմաստուն Կառավարութեան առաջնորդութեամբ:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

22 Յունուար 1966, Երուսաղէմ

Ն. Վ. Ռաաֆի Թեյ, Ամման.

Ռամստանի տոններուն առիթով, Ձերդ վեհափառութեան կը ներկայացնենք աղօթներս եւ օրհնութիւններս: Կ'աղօթեմ որ Աստուած Ձեզի շնորհէ կարողութիւն, որպէսզի Ն. Վ. Հիւսէյն Արքայի հովանաւորութեան եւ առաջնորդութեան ներքին ծառայեմք այս երկրին եւ անոր բարգաւաճման:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

22 Յունուար 1966, Երուսաղէմ

Ն. Վ. Մարաշախտ Հապէս Մաճախ, Ամման.

Ձերդ վեհափառութեան կը ներկայացնենք Ռամստանի շնորհ շնորհաւորութիւններս, աղօթելով որ Աստուած կարողութիւն ըլլաք Ձեզի՝ սիրելի այս երկրին յաջողութեամբ ծառայելու, զեկավարութեանը տակ Ն. Վ. Հիւսէյն Արքայի:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ